ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ԷԿՈՆՈՄԻԿՍ-ԱՈՒԴԻՏ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ECONOMICS AUDIT

REPUBLIC OF ARMENIA
*«ECONOMICS-AUDIT»*
LIMITID LIABILITY
COMPANY

Աուդիտորական ծառայությունների իրականացման Լիցենզիա ԱԾ N 085
Տրված՝ 15.12.2010թ ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից
ք. Երևան, Խանջյան 47/8 , Կորյունի 7/1 9
ct. Erevan, st. Koryun 7/1 9
Հեռ. /Tel/Բջջ. 094-40-99-80, 010-54-09-08, 010-58-01-71

30.03.2013

# ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## «ԱՌԳԵ ԲԻԶՆԵՍ» ՍՊԸ-ի

2012 թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

Հասցեատերը՝ «ԱՌԳԵ ԲԻԶՆԵՍ» ՍՊԸ-ի մասնակիցներին

Մեր կողմից իրականացվել է «ԱՌԳԵ ԲԻԶՆԵՍ» ՍՊԸ-ի կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ըստ որում այդ հաշվետվությունները ներառում են 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքները, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները բաղկացած հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագրից և այլ բացատրական տեղեկատվությունից:

*Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

*Աուդիտորի պատասխանատվությունը*

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով մեզանից պահանջվում է բավարարել բարոյական վարքի կանոնները, պլանավորել և անցկացնել աուդիտը՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր՝ ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

*Կարծիք*

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները տալիս են «ԱՌԳԵ ԲԻԶՆԵՍ» ՍՊԸ-ի 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի՝ ճշմարիտ և իրական պատկերը, համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

**«Էկոնոմիկս Աուդիտ» ՍՊԸ**

ՏՆՕՐԷՆ Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՈՒԴԻՏՈՐ

30.03.2013թ.

# Ֆինանսական հաշվետվություններ և

# Անկախ   աուդիտորի  եզրակացություն

## «ԱՌԳԵ ԲԻԶՆԵՍ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

## 2012թ. Դեկտեմբերի 31

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«ԷԿՈՆՈՄԻԿԱ-ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

Տնօրեն   Ա. Գրիգորյան

«30»  «Մարտի»  2013թ.

Տպագրված է 2 օրինակ

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
## «ԱՌԳԵ ԲԻԶՆԵՍ» ՍՊԸ
առ 31 դեկտեմբերի 2012թ.

| ԱԿՏԻՎ | 2012թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2011թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ | ծնթգ |
|---|---|---|---|
| 1 | 3 | 4 | 2 |
| **1. Ոչ ընթացիկ ակտիվներ** | | | |
| Հիմնական միջոցներ | 529,291 | 586,581 | |
| Կենսաբանական ակտիվներ | - | - | |
| Ներդրումային գույք | - | - | |
| Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ | - | - | |
| Ոչ նյութական ակտիվներ | 1,181 | 2,069 | |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ | - | - | |
| Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ | 20,000 | 31,000 | |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 193 | 4,135 | |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝ | - | - | |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | **550,665** | **623,785** | |
| **2. Ընթացիկ ակտիվներ** | - | - | |
| Պաշարներ | 1,133,007 | 1,131,054 | |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 1,371,013 | 894,408 | |
| Ընթացիկ շահութահարկի գծով կանխավճար | 59,129 | 105,980 | |
| Ընթացիկ ֆինանսական ներդրումներ | - | - | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 236,658 | 102,413 | |
| Այլ ընթացիկ ֆինանսական ակտիվներ | - | - | |
| Այլ ընթացիկ ակտիվներ | 3,925 | 4,339 | |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | **2,803,732** | **2,238,195** | |
| Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ | - | - | |
| ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ | **3,354,397** | **2,861,980** | |

| ՊԱՍԻՎ | 2012թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2011թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ | ծնթգ |
|---|---|---|---|
| 1 | 3 | 4 | 2 |
| **1. Սեփական կապիտալ** | | | |
| Կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի զուտ գումար | 240,729 | 240,729 | |
| Էմիսիոն եկամուտ | - | - | |
| Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ | - | - | |
| Կուտակված շահույթ | 481,038 | 340,984 | |
| Պահուստային կապիտալ | - | - | |
| Սեփական կապիտալի այլ տարրեր, այդ թվում՝ | - | - | |
| | - | - | |
| Ընդամենը սեփական կապիտալ | **721,767** | **581,713** | |
| **2. Ոչ ընթացիկ պարտավորություններ** | - | - | |
| Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ | - | - | |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | - | - | |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | - | - | |
| Այլ ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ | - | - | |
| Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ | - | - | |
| **Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ** | **-** | **-** | |
| **3. Ընթացիկ պարտավորություններ -** | - | - | |
| Կարճաժամկետ բանկային վարկեր | - | - | |
| Կարճաժամկետ փոխառություններ | 461,807 | 424,000 | |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 2,120,698 | 1,816,960 | |
| Շահութահարկի գծով պարտավորություն | - | - | |
| Ընթացիկ Պահուստներ | 50,125 | 39,308 | |
| Այլ ընթացիկ ֆինանսական պարտավորություն | - | - | |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | **2,632,630** | **2,280,268** | |
| Օտարման խմբում ներառված որպես վաճառքի համար դասակարգված պարտավորություններ | - | - | |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 3,354,397 | 2,861,980 | |

# ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## «ԱՌԳԵ ԲԻԶՆԵՍ» ՍՊԸ

2012թ. Դեկտեմբերի 31-ին
ավարտվող տարվա համար

| Ցուցանիշի անվանումը | 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | ծնթգ |
|---|---|---|---|
| 1 | 3 | 4 | 2 |
| Շարունակվող գործունեությունից | | | |
| Հասույթ | 12,162,330 | 9,428,473 | |
| Վաճառքի ինքնարժեք | 10,359,443 | 7,680,713 | |
| **Համախառն շահույթ (վնաս)** | **1,802,887** | **1,747,760** | |
| | | | |
| Այլ եկամուտներ | 129,565 | 133,800 | |
| Վարչական ծախսեր և այլ ծախսեր | 1,187,550 | 1,277,369 | |
| Ֆինանսական ծախսեր | 99,113 | 142,263 | |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս) | - | - | |
| Շահույթ (վնաս) մինչև հարկումը | **645,789** | **461,928** | |
| Շահութահարկի գծով ծախս | 164,751 | 120,944 | |
| Տարվա շահույթ(վնաս) շարունակվող գործունեությունից | **481,038** | **340,984** | |
| Ընդհատված գործունեության զուտ շահույթ (վնաս) | - | - | |
| Ընդամենը տարվա շահույթ (վնաս) | **481,038** | **340,984** | |
| | | | |
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ** | | | |
| Հիմնական միջոցների վերագնահատումից | | | |
| Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերաչափումից | | | |
| Դրամական հոսքերի հեջավորումից | | | |
| Ակտուարային շահույթ(վնաս)սահմանված հատուցումների թոշակային պլանի գծով | | | |
| Ասոցիացված կազմակերպությունների այլ համապարփակ եկամտի բաժնեմաս | | | |
| Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ | | | |
| **Ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունքներ** | | | |
| Շարունակվող գործունեությունից մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (վնաս) | | | |
| Շարունակվող գործունեությունից մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ (վնաս) | | | |
| | | | |